ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2024 թվականի N 2129-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գավառի համայնքապետարանի կողմից 30/07/2024 թվականին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/31 ծածկագրով հայտարարվել է Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքների ձեռքբերման մրցույթ:

11/09/2024 թվականի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստում /արձանագրություն 4/ պարզ է դարձել, որ N18, N19 չափաբաժինների մասով ընտրված մասնակից են ճանաչվել «ՔԱՆԱՆ ԸՆԴ ՅԱՆ» ՍՊԸ–ն, N3, N16, N17, N21, N23, N24, N25, N28, N29, N30 չափաբաժինների մասով Ա/Ձ Նէեմիա Ավակիմյանը, N9, N38 չափաբաժինների մասով «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ–ն, N35, N36, N37 չափաբաժինների մասով «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊԸ–ն:

Անգործության ավարտից հետո՝ 23/09/2024 թվականին Ընկերություններին eauction.armeps.am էլեկտրոնային համակարգով ավտոմատ կերպով ծանուցվել է պայմանագրի նախագիծ: Ընկերությունների կողմից մինչև սահմանված ժամկետի ավարտը՝ 30/09/2024 թվականը՝ չի ստորագրվել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացվել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասով, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով,
որոշում եմ

1. «ՔԱՆԱՆ ԸՆԴ ՅԱՆ» ՍՊԸ–ին, Ա/Ձ Նէեմիա Ավակիմյանին, «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ–ին, «ՖՌԱՆԿՈ ՍՈՒՋԻ» ՍՊԸ–ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20 __ թ. _____ ____
ք.Գավառ